

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/9

15 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Արմեն Պետրոսյանի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշման դեմ:

**Քաղաքացի Արմեն Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ (այսուհետ նաև հարկային մարմին կամ Վարչական մարմին) 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշմամբ որոշվել է անհատ ձեռներեց Արմեն Պետրոսյանից գանձել 1.796.417 դրամ գումար, որից հաստատագրված վճարի գումար 1.425.021 դրամ (2006 թ-ի 2-րդ և 2009 թ-ի 1-ին ամիսների հաշվարկ), պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումար 371.396 դրամ (2009 թ-ի հունվարից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների նվազագույն սոցիալական վճար): Այնինչ, ներքոշարադրյալ փաստերով հիմնավորվում է, որ Արմեն Պետրոսյանի նկատմամբ նշված ժամանակաշրջանի համար հարկային պարտավորություններ ենթակա չէին հաշվարկման:

Քաղաքացի Արմեն Պետրոսյանը զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի կողմից 02.05.2006 թ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ Ա/Ձ Արմեն Պետրոսյանի գործունեությունը դադարեցվել է 14.04.1999 թ-ին:

Հարկային մարմնի դիմումի հիման վրա հարուցված թիվ SU-1562 սնանկության գործով ՀՀ տնտեսական դատարանի 06.10.2004 թ-ին կայացված վճռով Արմեն Պետրոսյանը ճանաչվել է անվճարունակ: Հոգուտ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 767.400 դրամ, ինչպես նաև 100.000 դրամ պետական տուրքի գումար հոգուտ ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Ձեյթուն հարկային տեսչության:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Ձեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի թիվ 2-9318 քաղաքացիական գործով 08.11.2005 թ-ին կայացված վճռով թույլատրվել է Արմեն Պետրոսյանին համասեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Շիրվանզադեի փողոցի թիվ 2 շենքի թիվ 14 բնակարանի 1/6-րդ մասը նախապատվության իրավունքով վաճառել նշված բնակարանի մյուս համասեփականատերին:

Արմեն Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող վերոգրյալ բնակարանի 1/6-րդ մասն իրացվել է, պարտավորությունը համարվել է կատարված, իսկ սնանկության գործը՝ փակված:

Ներկայացված փաստերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ Արմեն Պետրոսյանի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության ընթացքում գոյացել են հարկային պարտավորություններ, որոնք օրենքով սահմանված կարգով վճարված չլինելու պարագայում հարկային մարմնի կողմից հարուցվել է սնանկության վարույթ, իրացվել է Արմեն Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, պարտավորությունը փաստացիորեն կատարվել է, ձեռնարկատիրական գործունեությունը՝ դադարել:

Վկայակոչված տեղեկանքի համաձայն Արմեն Պետրոսյանը 14.04.1999 թվականից դադարել է իր ձեռնարկատիրական գործունեությունը, հետևաբար ձեռնարկատիրական գործունեությունը դադարելու պահին հաջորդող ժամանակաշրջանի համար նշված հարկերի գծով հարկային պարտավորություններ չեն կարող հաշվարկվել նշված ժամանակաշրջանում փաստացի ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած և անհատ ձեռներեց չհանդիսացող անձի մոտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Արմեն Պետրոսյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշմամբ սահմանված հարկային պարտավորությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշման համաձայն 27.05.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Արմեն Պետրոսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.796.417 դրամ, որից հաստատագրված վճար 1.425.021 դրամ (2006 թ-ի 2-րդ - 2009 թ-ի 1-ին ամիսների հաշվարկ), պարտադիր սոցիալական ապահովության վճար 371.396 դրամ (2009 թ-ի հունվարից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների նվազագույն սոցիալական վճար):

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ տնտեսական դատարանի 08.10.2004 թ-ի վճռով Ա/Ձ Արմեն Պետրոսյանը ճանաչվել է անվճարունակ: Բացի այդ, սույն գործում առկա է ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի 03.05.2006 թ-ի տեղեկանքն այն մասին, որ Ա/Ձ Արմեն Պետրոսյանի գործունեությունը 02.05.2006 թ-ից դադարեցվել է:

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշումը կայացվելու դրությամբ ՀՀ ՖՆ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Արմեն Պետրոսյանի կարգավիճակը եղել է «գործող»: Նշված հանգամանքը, ըստ էության, հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշման կայացման համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում ՀՀ տնտեսական դատարանի 08.10.2004 թ-ի վճռով Ա/Ձ Արմեն Պետրոսյանը ճանաչվել է անվճարունակ և 02.05.2006 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, այդ պահից սկսած դադարել են Արմեն Պետրոսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշմամբ Ա/Ձ Արմեն Պետրոսյանի նկատմամբ պարտավորություններն առաջադրվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո ղ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 10.06.2014 թ-ի թիվ 678 որոշումը:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**